ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ

# *Ոռոգման համակարգերում ավելցուկային ջրերի անհարկի կորուստների կանխմանն ուղղված միջոցառումների ծրագիր*



## ԳԻՐՔ 4. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Երևան

2023թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ

# *Ոռոգման համակարգերում ավելցուկային ջրերի անհարկի կորուստների կանխմանն ուղղված միջոցառումների ծրագիր*

«Տավուշ», «Լոռի», «Երևան», «Կոտայք», «Թալին», «Արարատ», «Արագածոտն», «Եղեգնաձոր» և «Սյունիք» ջրօգտագործողների ընկերությունների կողմից սպասարկվող ոռոգման տարածքների օրվա կարգավորման ջրամբարների կառուցման և վերակառուցման նախագծերի պատրաստում

## ԳԻՐՔ 4. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

| | |
|---|---|
| Նախագծման խորհրդատու | «Մոդուլ» ՍՊԸ |
| Պատվիրատու | ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտե |
| Պայմանագիր | № ՋԿ-ԵՄԾՁԲ-22/1 |

Երևան

2023թ.

# ՆԱԽԱԳԾԻ ԿԱԶՄԸ

ԳԻՐՔ 1. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՍՆԱԳՐԵՐ

ԳԻՐՔ 2. ԳԾԱԳՐԵՐ

ԳԻՐՔ 3. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԻ ՑՈՒՑԱԿ

ԳԻՐՔ 4. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ՝

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ

<table>
<tr><td colspan="5">ՆԱԽՆԱԿԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ<br>*(Ենթածրագրի համար հատուկ պատրաստված)*</td></tr>
<tr><td colspan="5">ՄԱՍ 1: Ծրագրի նախագիծը և առանձնահատկությունները<br>Ինստիտուցիոնալ և ադմինիստրատիվ տվյալներ</td></tr>
<tr><td>1</td><td>Ծրագրի անվանումը</td><td colspan="3">**Ոռոգման համակարգերում ավելցուկային ջրերի անհարկի կորուստների կանխմանն ուղղված միջոցառումների ծրագիր**</td></tr>
<tr><td>2</td><td>Ենթածրագրի անվանումը</td><td colspan="3">**«Հայաստանի Հանրապետության մարզերում ջրօգտագործողների ընկերությունների սպասարկման տարածքում թվով 31 օրվա կարգավորման ջրավազանների առաջնահերթ կառուցում և վերակառուցում»**<br>**ՋԿ-ԵՄԾՁԲ-22/1**<br>**Չափաբաժին 2**</td></tr>
<tr><td>3</td><td>Ենթածրագրի վայրը</td><td colspan="3">Տավուշի, Լոռու և Արագածոտնի մարզեր, Հայաստանի Հանրապետություն</td></tr>
<tr><td colspan="5">Ինստիտուցիոնալ կարգավորումներ</td></tr>
<tr><td>4</td><td>Ինստիտուցիոնալ կարգավորումներ</td><td>Ծրագիրն իրականացնող մարմին<br>**ՀՀ ՏԿԵՆ Ջրային կոմիտե**</td><td>Աշխատանքների վերահսկում<br>**Մարինե Վարդանյան**<br>ՀՀ ՏԿԵՆ ջրային կոմիտեի ԲՍԱԱ հարցերով խորհրդատու</td><td>Կապալառու (ընկերություն)<br>**«Մոդուլ» ՍՊԸ**</td></tr>
<tr><td colspan="5">Տեղանքի նկարագիրը</td></tr>
<tr><td>7</td><td colspan="4">***Տեղանքի աշխարհագրական անվանումը*** ՝<br>***Լոռու մարզ*** ՝ Այգեհատ, Օձուն, Խնկոյան, Ջրաշեն բնակավայրեր, Սպիտակ քաղաքի թաղամասեր,<br>***Տավուշի մարզ*** ՝Ոսկեպար, Բաղանիս, Ոսկեվան, Կոթի, Դովեղ<br>***Արագածոտնի մարզ*** ՝Դաշտադեմ, Աշնակ, Մուղնի, Արուճ, Ներքին Բազմաբերդ,</td></tr>
</table>

| | |
|---|---|
| 8 | <u>**Ենթածրագրի ներքո նախատեսված աշխատանքների ծավալը (ընթացիկ վիճակը և պլանավորված աշխատանքների տեսակը)**</u><br>Ոռոգման համակարգերում և գլխամասային հանգույցներում պահանջվող ծավալի ջրի կուտակման, ինչպես նաև ավելցուկային ջրերի անհարկի կորուստների կանխման ծրագրի շրջանակներում կիրականացվի<br><br>***«Լոռի» ՋՕԸ (4 ՕԿՋ)***<br>- Լոռու մայր ջրանցքի ն2 470+00 հատվածում բնական թասի օգտագործմամբ, հողային պատվարով, մինչև 50 հազ. խմ ծավալով ՕԿՋ կառուցում<br>- Սպիտակի աջափնյա պոմպակայանի՝ 240 հազ. խմ ծավալով ՕԿՋ նորոգում (ՕԿՋ-ի հունի մաքրում, բետոնային սալերի փոխարինում)<br>- Խնկոյանի պոմպակայանի՝ 260 հազ. խմ ծավալով ՕԿՋ հիմնանորոգում (ՕԿՋ-ի հողային պատվարի և ջրհեռի նորոգում, բետոնային սալերի փոխարինում)<br>- Ջրաշենի պոմպակայանի՝ 3 հազ. խմ ծավալով ՕԿՋ նորոգում (բետոնային սալերի փոխարինում)<br><br>***«Տավուշ» ՋՕԸ (2 ՕԿՋ)***<br>- Դովեղի պոմպակայանի դոտացիոն ՕԿՋ-ի, հողային պատվարով, 3,5 հազ. խմ ծավալով վերակառուցում<br>- Ոսկեպար-Բաղանիս-Ոսկեվան-Կոթի ինքնահոս ջրագծի վրա՝ Բաղանիս-Ոսկեվան N2 նախկին պոմպակայանի տարածքում, հողային պատվարով, 5 հազ. խմ ծավալով ՕԿՋ կառուցում<br><br>***«Արազածոտն» ՋՕԸ (3 ՕԿՋ)***<br>- Արզնի-Շամիրամ 2-րդ հերթի ջրանցքի վերջնամասում գտնվող՝ Ներքին Բազմաբերդի պոմպակայանի ջրընդունիչ ավազան հանդիսացող 24 հազ. խմ ծավալով ՕԿՋ-ի հիմնանորոգում<br>- Արզնի-Շամիրամ 2-րդ հերթի ջրանցքի ն2 369+30 հատվածում գտնվող՝ Արուճի պոմպակայանի ջրընդունիչ ավազան հանդիսացող 10 հազ. խմ ծավալով ՕԿՋ-ի հիմնանորոգում<br>- Արզնի-Շամիրամ 2-րդ հերթի ջրանցքի ն2 29+90 հատվածում գտնվող՝ Մուղնու՝ 25 հազ. խմ ծավալով ՕԿՋ-ի հիմնանորոգում<br><br>***«Թալին» ՋՕԸ (1 ՕԿՋ)***<br>Թալինի 3-րդ հերթի ջրանցքի վերջնամասում Դաշտադեմի պոմպակայանի ջրի ծավալն ապահովելու համար ջրընդունիչ ավազանի մեծացում մինչև 7 հազ. խմ ծավալով |

9

**Տարածքի համառոտ նկարագրություն**

***Լոռու մարզ***

**Բուսական աշխարհ:**

Կլիմայի և ռելիեֆի բազմազանության, բնապատմական զարգացման և ուրույն աշխարհագրական դիրքի շնորհիվ բազմազան է Լոռու մարզի բուսականությունը:

Բնական պայմանների նման բազմազանության պատճառով այստեղ նպաստավոր պայմաններ են ստեղծվել լեռնատափաստանային, լեռնաանտառային և մերձալպյան, մասամբ նաև ալպյան բուսականության աճման և զարգացման համար:

Լեռնատափաստանային բուսականություն, որը ձևավորվում է բարեխառն չորային խոնավ կլիմայի պայմաններում. այն զբաղեցնում է ընդարձակ մակերես՝ տարածվելով մարզի ցածրադիր շրջաններից մինչև 2200-2300մ բարձրությունները:

Մարզի տափաստաններում տիրապետող բուսատեսակներից են՝ փետրախոտը (Stipa pennata L.), սեզ սողացող (Elytridia repens L.), դաշտավլուկ մարգագետնային (Poa pratensis L.), շյուղախոտ մարգագետնային (Festuca pratensis Huds.), կծմախոտ (Bothriochloa ischaemum L.), իսկ խոնավ տեղերում՝ երիցուկ (Tanacetum): Չոր լեռնատափաստանների համար ավելի տիպիկ են փշոտ բույսերը, այդ թվում՝ գազ ասեղնային (Astragalus picnophyllus Stev.) և զանազան թփերը, մացառները: Տափաստանային բուսականության առանձին տիպ են կազմում հացազգի բույսերը: Բավականաչափ տարածված են փշոտ գազաթփերը, որոնցից տեղ-տեղ ձևավորվում են տափաստանները: Դրանք բնորոշ են հատկապես Փամբակի լեռներին:

Լեռնաանտառային բուսականությունը հիմնականում տարածված է մարզի լեռնաշղթաների (Վիրահայոց, Բազումի, Փամբակի և Գուգարաց) զառիթափ լանջերին, 600մ-ից մինչև 2000-2100մ բարձրություններում, ուր սովորաբար տարածված են լվացված, հումուսով աղքատ հողերը: Լոռու մարզի անտառները հարուստ են ծառատեսակներով (մոտ 60 տեսակի ծառ, 90 տեսակից ավելի թուփ): Անտառի հիմնական ծառատեսակը հաճարենի արևելյանն (Fagus orientalis Lipsky) է, որը խոնավության և հողի նկատմամբ բավական պահանջկոտ ծառատեսակ է: Այն չի սիրում օդի ոչ շատ բարձր ջերմաստիճանները և ոչ էլ շատ խիստ ցրտի պայմանները: Հաճարենու հետ աճում են կաղնի արևելյան (Quercus macranthers Fisch. et C. A. Mey.), կաղնի վրացական (Q. iberica Stev.), թխկի վրացական (Acer ibericum M. Bieb.), լորենի կովկասյան (Tilia caucasica), բոխի սովորական (Carpinus betulus L.) և այլն: Կաղնին երբեմն կազմում է ինքնուրույն անտառ: Այստեղ տարածված է կաղնու երկու տեսակ՝ լեռնային կամ արևելյան և վրացական: Կաղնին համեմատաբար ցրտադիմացկուն և չորադիմացկուն է, ունի ամուր բնափայտ, երկարակյաց է, տալիս է բարձր որակի բնափայտ:

**Կենդանական աշխարհ:**

Լեռնատափաստանային գոտու կենդանական աշխարհը բնորոշ է հատկապես կրծողներով, որոնցից լան տարածում ունեն՝ դաշտամուկը (Arvicolinae), ճագարամուկը (Dipodidae), կույր մուկը (Mus caecus), համստերը (Cricetinae): Տարածված են նաև կզաքիսը (Saltus martes), գետնասկյուռը (Spermophilus citellus), գորշ գայլը (Canis lupus), աղվեսը (Vulpes): Թռչուններից տարածված են՝ բադը (Anatidae), գորշ կաքավը (Perdix cinerea), շիկահավը (Erithacus rubecula), ճնճղուկը **(Passeridae),** լորը (Coturnix), կաքավը (Perdix), արտույտ անտառային (Lullula arborea), ծիծեռնակը (Hirundinidae), կաչաղակը (Pica), արծիվը (Aquila), բազեն (Falco) և այլն: Այստեղ սողունները քիչ են:

Մերձալպյան և ալպյան գոտին ունի աղքատ կենդանական աշխարհ, որի պատճառը բնակլիմայական աննպաստ պայմաններն են: Այստեղ հանդիպում են լեռնային տափաստաններին բնորոշ կենդանիներ՝ աղվես, գայլ, նապաստակ (Leporidae), աքիս (Mustella nivalis), դաշտամուկ սովորական (Arvicolinae peculiaris), քարաբնակ կզաքիս (saltus martes): Անասնապահության զարգացման հետևանքով այստեղ շատ են թափանցում գայլերը, որոնք վտանգավոր են անասունների համար:

***Տավուշի մարզ***

***Բուսական աշխարհ:***

Տարածքին բնորոշ են անտառային տարածքները, մերձալպյան և ալպյան մարգագետինները:

***Անտառային տարածքին*** բնորոշ բուսատեսակներն են՝ Կաղնի արևելյան (Quercus macranthera), Կաղնի վրացական (Quercus iberica), Հաճարենի արևելյան (Fagus orientalis), Բոխի սովորական (Carpinus betulus), Ղաժի (Carpinus orientalis), Սոճի Կոխի (Pinus kochiana), Կենի հատապտուղային

(Taxus baccata), Սոսի արևելյան (Platanus orientalis)

Տարածքին բնորոշ էնդեմիկ բուսատեսակներն են Պսեֆելուս դեբեդի (Psephellus debedicus), Պսեֆելուս զանգեզուրի (Psephellus zangezuri), Շնդեղ Գոհարի (Colchicum goharae), Խլոպուզ Միրզոևայի (Merendera mirzoevae), Տանձենի խառնված (Pyrus complexa),Տանձենի բարձր (Pyrus elata), Տանձենի մեղրիի (Pyrus megrica), Մասրենի Սոսնովսկու (Rosa sosnovskyana), Մորենի Թախտաջյանի (Rubus takhtadjanii), Կտվախոտ զանգեզուրի (Linaria zangezura) և այլն:

***Մերձելպյան և ալպյան մարգագետինային տարածքին*** բնորոշ բուսատեսակներն են՝ Ոզնախոտ կծկավոր (Dactylis glomerata), Սիզախոտ մարգագետնային (Phleum pratense), Դաշտախոտուկ լազիստանյան (Agrostis lazica), Գարի մանուշակապույն (Hordeum violaceum), Բրոմոպսիս խայտաբղետ (Bromopsis variegata), Շյուղախոտ տարբեր (Festuca varia), Հողմածաղիկ պծավոր (Anemone fasciculata), Դորոնիկում երկարատերև (Doronicum oblongifolium), Ջիվան հսկայական (Cephalaria gigantea), Քոսքսուկ կովկասյան (Scabiosa caucasica), Խատուտիկ Ստևենի (Taraxacum stevenii), Զանգակ եռատամ (Campanula tridentata), Ոջլադեղ հաստակնճիթ (Pedicularis crassirostris), Բոշխ տխուր (Carex tristis):

Տարածքին բնորոշ էնդեմիկ բուսատեսակներն են Քարխոտ հայաստանյան (Symphytum hajastanum), Շնդեղ Նինայի (Colchicum ninae), Ճայկտուց Սոսնովսկու (Erodium sosnowskianum), Աստղաշուշան Գաբրիելյանի (Ornithogalum gabrielianae), Թրաշուշան հայաստանյան (Gladiolus hajastanicus), Կակաչ Գաբրիելյանի (Papaver gabrielianae), Բրոմոպսիս զանգեզուրի (Bromopsis zangezura), Դաշտավլուկ Գրեյտերի (Poa greuteri), Ոսկեվարսակ գեղամի (Trisetum geghamense), Գայլաթաթ հողավորված (Alchemilla heteroschista), Գայլաթաթ սևանի (Alchemilla sevangensis), Գայլաթաթ Սմիրնովի (Alchemilla smirnovii), Խռնդատ սեվանի (Verbascum sevanense), Դաշտախոտուկ մազոտածաղիկ (Agrostis trichantha):

***Կենդանական աշխարհ:***

***Անտառային, ալպյան և մերձալպյան տարածքներին*** բնորոշ են սովորական և հասարակական դաշտամուկ, մոխրագույն առնետ, սովորական լորտու: ժայռային մողես, քարակզաքիս, աղվես, սկյուռ: Այստեղ նկատելի են աքիսի, քարակզաքիսի կենսագործունեության հետքերը: Հանդիպում է նաև ոզնի:

Հանդիպում է շնազայլ, լճագորտ, ջրային լորտու: Ձկներ՝ կարմրախայտ, կովկասյան թեփուղ, քուռի նեղիրան ենթաբերան, քուռի բեղլու և քուռի կողակ: Զոոբենթոսի ներկայացուցիչներից այստեղ հանդիպում են ինչպես մեզաբենթոսի, այնպես էլ մակրոբենթոսի ներկայացուցիչներ՝ սակավախոզան որդեր, տզրուկներ, ճպուռներ, միօրիկներ և այլն: Ֆիտոպլանկտոնն ու զոոբենթոսի ներկայացուցիչներն այստեղ սակավ են, քանի որ այս գետերը արագահոս են:

Թռչուններից մոխրագույն ագռավը, տնային ճնճղուկը, թխակապույտ աղավնին, վայրի բադը, գորշ կաքավը և փայտփորիկը, խածկտիկը, արտույտ, լորը, երաշտահավերը՝ սարահարթերում, փետրավոր գիշատիչներից՝ բուն, բվեճը, մորաճուռակ և այլն:

Շատ են միջատները (մրջյուններ, մորեխներ, ծղրիդներ, ճանճեր, ճթթաններ և այլն):

Դաշտային ուսումնասիրությունների և գրականական տվյալների նույնականացման արդյունքում բուն ծրագրի իրականացման տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդանատեսակներ չեն հայտնաբերվել:

***Վայոց Ձորի մարզ***

***Բուսական աշխարհ:***

Տարածքին բնորոշ բուսատեսակներն են՝ Օշինդր բուրավետ (Artemisia fragrans), կապար փշոտ (Capparis spinosa), դժնիկ քաղցր (Rhamnus pallasii), ավելաբույս պետնատարած (Kochia prostrata), Փշամնդիկ փշոտ (Athraphaxis spinosa), Անիսանտ տանիքային (Anisantha tectorum), Դաշտավլուկ սոխուկակիր (Poa bulbosa), Տերեփուկ չռված (Centaurea squarrosa), Փետրախոտ մազոտ (Stipa

capillata), Լվածաղիկ հազարատերև (Tanacetum chiliophyllum), Կոտեմ բշտիկավոր (Lepidium vesicarium), Իշակաթնուկ Մարշալի (Euphorbia marschalliana), Երիզախոտ երկրամազ (Thaeniatherum crinitum), Գեղածնկիկ մատիտեղանման (Calligonum polygonoides), Զեյդլիցիա ծաղկավետ (Seidlitzia florida), Օշան հավամարպանման (Salsola ericoides), Սարսազան կոնաձև (Halocnemum strobilaceum), Աղահասկիկ մերձկասպյան (Halostachys caspica):

Տարածքին բնորոշ էնդեմիկ բուսատեսակներն են Սոխ Շխիյանի (Allium schchianae), Տերեփուկ Ալեքսանդրի (Centaurea alexandri), Տերեփուկ Արփայի (Centaurea arpensis), Խոզանափուշ դարալագյազի (Cousinia daralaghezica), Լոշուն Բուշերի (Isatis buschiorum), Ալոխրուզա Թախտաջյանիի (Allochrusa takhtadjanii), Բուֆոնիա Թախտաջյանիի (Bufonia takhtajanii), Գազ ամբողջատերև (Astragalus holophyllus), Կակաչ վարդագույն (Papaver roseolum), Ծմենի հայկական (Cotoneaster armenus), Խռնդատ Գաբրիելյանի (Verbascum gabrielianae), Խինձ Գորովանի (Scorzonera gorovanica), Կակաչ Գորովանի (Papaver gorovanicum) և այլն:

Դաշտային ուսումնասիրությունների և գրականական տվյալների նույնականացման արդյունքում բուն ծրագրի իրականացման տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բույսեր չեն հայտնաբերվել:

Շինարարական աշխատանքների ընթացքում բուսական տեսակների վրա հնարավոր ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ և կարող են մեղմացվել ԲՍԿՊ-ում նախատեսված բնապահպանական միջոցառումների շնորհիվ:

**Կենդանական աշխարհ:**

Տարածքին բնորոշ կենդանատեսակները տարածված են նաև մարգագետնատափաստանային գոտում: Անապատային և կիսաանապատային գոտու կաթնասունների տեսակային կազմից ամենուրեք հանդիպում են՝ Mucrotus arvalis Pall. (դաշտամուկ), Crocidura (սպիտակատամիկ), Vulpes vulpes L. (աղվես), Canis lupus (գայլ), Erinaceus auritus (երկարականջ ոզնի): Կաթնասուններից հանդիպում են նաև մի քանի տեսակ չղջիկներ՝ Nyctalus noctula (շեկ իրիկնաչղջիկը), Vespertilio ognevi (Օգնևի մաշկեղը), միջատակերներ (Hemiechinus auritus, Mustela nivalis) և կրծողներից գորշ կամ եվրոպական նապաստակը (Lepus europaeus) և այլն:

Անողնաշարավոր կենդանիներից տարածաշրջանում հանդիպում են՝ Phytodrymadusa armeniaca (ծղրիդներ), Nocarodes armenus (մորեխներ), Dictyla subdola, Geotomus punctulatus (փայտոջիլ), Amphicoma eichleri, Cantharis araxicola (բզեզներ), Zodarion petrobium (սարդեր):

Կարիճներից հանդիպում է միայն Buttus caucasicus-ը: Արարատյան հարթավայրի գետերում և ջրանցքներում հանդիպում են Cyrpinus carpio (ծածանը), Barbus capito (ճանարը), Barbus lacerta cyri (քուռի բեղլու) և այլն: Այս տարածաշրջանում թռչունների բնակեցումը հարաբերական է, քանի որ բնորոշվում են տարանցիկ, նստակյաց և սեզոնային չվող տեսակներով, ինչպես օրինակ՝ Perdix L.(կաքավ), Grus grus L. (կռունկ), և այլն:

Կարմիր գրքում գրանցված կենդանիների տեսակներից տարածաշրջանում կաթնասուններից հանդիպում են՝ Rhinolophus Mehelyi (Մեհելյիի պայտաքիթ), (Barbastella leucomelas,) Ասիական լայնականջ չղջիկ, (Miniopterus schreibersi) Սովորական երկարաթև չղջիկ: Թռչուններից հանդիպում են՝ (Circaetus galicus galicus) Եվրոպական օձակերը, (Merops superciliosus persicus) Պարսկական կանաչ մեղվակերը , (Sylvia nisoria nisoria) Եվրոպական ճուռակնման շահրիկը, (Luscinia svecica occidentalis), Իրանական կապտափողը, (Remiz pendulinus menzbieri) Իրանական սովորական ճոճհավը և այլն: Սողուններից Կարմիր գրքում գրանցված սողուններից այստեղ հանդիպում են՝ (Eumeces schnederi) Երկարաթև սցնիկը, (Mabuya aurata) Ոսկեգույն մաբույա, (Elaphe hohonaekeri) Անդրկովկասյան սահնօձ:

Կենդանական աշխարհի վրա ժամանակավոր վնասակար ազդեցություն կարող են թողնել հողային աշխատանքները՝ վտանգելով նրանց բնադրման և ձվադրման վայրերը, իսկ մեքենաների աղմուկի ժամանակավոր գործոնը կարող է խախտել նրանց միգրացիոն ուղիները: Ջրատարների անցկացման տարածքներում հնարավոր կարճաժամկետ ազդեցությունների կարող են ենթարկվել սովորական մկնանմանները (Muridae), թփուտային դաշտամուկը (Msubterraneus) մարգագետնային մողեսիկը (Lacerta praticola): Տարածքի կենդանական աշխարհի պահպանության նպատակով պետք է մշակվի

հողային աշխատանքների իրականացման ժամանակացույց, որում կբացառվեն հողային աշխատանքների իրականացումը կենդանիների ձմեռային քնի և բազմացման ժամանակահատվածներում (հոկտեմբերի կեսից մինչև ապրիլի կես):
Շինարարական աշխատանքների ընթացքում կենդանական տեսակների վրա հնարավոր ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ և կարող են մեղմացվել ԲՍԿՊ-ում նախատեսված բնապահպանական միջոցառումների շնորհիվ:
**<u>Սոցիալական</u>** - Ոռոգման համակարգերում և գլխամասային հանգույցներում պահանջվող ծավալի ջրի կուտակման, ինչպես նաև ավելցուկային ջրերի անհարկի կորուստների կանխման ծրագրի շրջանակներում շահառու և ազդակիր համայնքների սոցիալ-ժողովրդագրական տվյալները ներկայացված են ստորև բերված աղյուսակներում:
**Լոռի ՋՕԸ**

| Մարզ | Համայնք | Տնային տնտեսությունների /ՏՏ/ թիվը** | Ընտանեկան նպաստ ստացող ՏՏ թիվը** | Մշտական թիվը 2011թ-ի մարդահամարի տվյալներով* | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | Ընդամենը | Տղամարդ | Կին |
| Լոռի | Այգեհատ | 87 | 10 | 263 | 113 | 150 |
| | Օձուն | 1220 | 144 | 4048 | 1939 | 2109 |
| | Խնկոյան | 112 | 19 | 259 | 125 | 134 |
| | Ջրաշեն | 839 | 197 | 3096 | 1570 | 1526 |
| | Սպիտակ | 4352*** | 975 | 12887 | 6279 | 6602 |

*https://armstat.am/file/doc/99485708.pdf
**http://lori.mtad.am/about-communities/
*****Ծրագրից կօգտվի նշված ՏՏ-ների 30%** (Ծրագրից կօգտվեն Սպիտակի թունել չհասած ձախակողմյան թաղամասը):
Լոռու Մայր ջրանցքի ՕԿՋ-ից կօգտվեն Այգեհատ և Օձուն բնակավայրերը, ոռոգելի հողերը կազմում են 230 հա, սակայն ջրի սակավության պատճառով ոռոգվում է այդ հողերի 20-30%-ը, որը կազմում է մոտ 70 հա: Նախատեսվող ջրամբարը կառուցելուց հետոջ ոռոգելի հողերը կավելանան ևս 150-160 հա-ով: Այս հողերում մշակում են եգիպտացորեն, կարտոֆիլ, ազնվամորի, լոբի և պտղատու այգիներ:
Ջրաշենի ՕԿՋ-ի իշխման տակ կան 40-50 հա տնամերձ հողամասեր, որոնք նույնպես թերի են ոռոգվում (40%), ջրամբարի կառուցումից հետո ոռոգումը կիրականացվի 95%-ով: Այս հողերում հիմնականում մշակում են կարտոֆիլ և կաղամբ:
Խնկոյանի ՕԿՋ-ի իշխման տակ կան 60-65 հահողամասեր, որից ոռոգվում է միայն 10%-ը, ծրագրի ավարտից հետո ոռոգելի կդառնա 60 հա: Այս հողերում հիմնականում մշակում են կարտոֆիլ:
Խնկոյանի ՕԿՋ-ի իշխման տակ կան 150-180 հա հողեր, որից ոռոգվում է 80 հա, ծրագրի ավարտից հետո կոռոգվի 100%-ով: Այս հողերում հիմնականում մշակում են կարտոֆիլ:
**Տավուշ ՋՕԸ**

| Մարզ | Համայնք | Տնային տնտեսությունների /ՏՏ/ թիվը** | Ընտանեկան նպաստ ստացող ՏՏ թիվը** | Մշտական թիվը 2011թ-ի մարդահամարի տվյալներով* | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | Ընդամենը | Տղամարդ | Կին |
| Տա | Դովեղ | 138 | 15 | 534 | 262 | 272 |

| | Կոթի | 570 | 115 | 2014 | 995 | 1019 |
|---|---|---|---|---|---|---|

*https://armstat.am/file/doc/99484283.pdf

**http://tavush.mtad.am/about-communities/

Կոթի ընդհանուր հողային ֆոնդը կազմում է 1593 հա, որից գյուղատնտեսական նպատակո օգտագործվում է 96 հա հողատարածք՝ հիմնականում տնամերձեր, որից պտղատու այգիներ կազմու են 56 հա, բանջարբոստանային մշակաբույսեր 40 հա: ՕԿՋ-ի կառուցմամբ ոռոգելի հողատարածքներ ավելացնել 35 հա-ով:

Դովեղի հողային ֆոնդը կազմում է 285 հա որից գյուղատնտեսական նպատակով օգտագործվում է 35 հա հողատարածք՝ հիմնականում տնամերձեր, որից պտղատու այգիներ կազմում են 24 հա բանջարբոստանային մշակաբույսեր 11 հա: ՕԿՋ-ի կառուցմամբ ոռոգելի հողատարածքներն ավելացնե 30 հա-ով:

**Թալին ՋՕԸ**

| Մարզ | Համայնք | Տնային տնտեսությունների /ՏՏ/ թիվը** | Ընտանեկան նպաստ ստացող ՏՏ թիվը** | Մշտական թիվը 2011թ-ի մարդահամարի տվյալներով* | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | Ընդամենը | Տղամարդ | Կին |
| Արագածոտն | Դաշտադեմ | 115 | 8 | 548 | 266 | 282 |
| | Աշնակ | 391 | 55 | 1031 | 537 | 494 |

*https://armstat.am/file/doc/99487293.pdf

**http://aragatsotn.mtad.am/about-communities/

Թալինի 3-րդ հերթի ջրանցքի ՕԿՋ-ի իշխման տակ ընկած է Դաշտադեմ և Աշնակ համայնքների տնամերձ ոռոգելի հողատարածքները: Դաշտադեմ համայնքում ոռոգվում է 65 հա տնամերձ հողատարածք, իսկ Աշնակ համայնքում 76 հա՝ բոլորը պտղատու այգիներ:

**Արագածոտն ՋՕԸ**

| Մարզ | Համայնք | Տնային տնտեսությունների /ՏՏ/ թիվը** | Ընտանեկան նպաստ ստացող ՏՏ թիվը** | Մշտական թիվը 2011թ-ի մարդահամարի տվյալներով* | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | Ընդամենը | Տղամարդ | Կին |
| | Մուղնի | 260 | 21 | 781 | 371 | 410 |
| | Արուճ | 278 | 32 | 1014 | 518 | 496 |
| | Ներքին Բազմաբերդ | 396 | 62 | 1417 | 704 | 713 |

*https://armstat.am/file/doc/99487293.pdf

**http://armavir.mtad.am/about-communities/

Մուղնի ՕԿՋ-ի իշխման տակ ընկած կան 220,2 հա ոռոգելի հողատարածքներ որից 79,6 հա անմշակ, 81,6 պտղատու այգի, 5,9 հա խաղողի այգի, 52,8 բանջար բոստանային կուլտուրաներ, 0,3 այլ:

Արուճի ՕԿՋ-ի իշխման տակ ընկած կան 109,55 հա ոռոգելի հողատարածքներ, որից 20 հա անմշակ, 7,35 պտղատու այգի, 2,2 հա խաղողի այգի, 48 հա հացահատիկ և 32 հա առվույտ:

Ներքին Բազմաբերդի ՕԿՋ-ի իշխման տակ ընկած կան 357 հա ոռոգելի հողատարածքներ, որից 195 հ անմշակ, 157 հա պտղատու այգի, 5 հա խաղողի այգի:

| | |
|---|---|
| | **Հողի օգտագործում**<br>Սույն խորհրդատվական ծառայության շրջանակներում՝ ուսումնասիրությունների արդյունքում պարզ դարձավ, որ<br>1. Լոռու մայր ջրանցքի նշ 470+00 հատվածում բնական թասի օգտագործմամբ, հողային պատվարով, մինչև 50 հազ. խմ ծավալով ՕԿՋ կառուցում համար Այգեհատ բնակավայրում նախատեսված տարածքը չունի կադաստրային վկայական: Ներկայումս Ալավերդու համայնքապետարանը զբաղվում է նոր կադաստրային վկայականի ձեռք բերման և անհրաժեշտության դեպքում հողի նպատակային նշանակության փոփոխման հարցերով:<br>2. Դովեղ և Կոթի բնակավայրերի կադաստրային քարտեզների կորդինատները չէին համապատասխանում նախագծող ընկերության կողմից կադաստրի կոմիտեից ձեռք բերված կորդինատների հետ, ինչպես նաև համաձայն Դովեղ բնակավայրի քարտեզի նախագծված տարածքի փոքր հատված պատկանում է բնակչի:<br>Ներկայումս Նոյեմբերյանի համայնքապետարանի կողմից ընթանում են կորդինատների ճշգրտման աշխատանքներ:<br><br>Ծրագրի այլ հատվածներում մասնավոր հողի օգտագործում չի նախատեսվում, քանի որ նախագծերը ներառում են միայն առկա ՕԿՋ-ների վթարային և քայքայված հատվածների վերանորոգում կամ նորերի կառուցում:<br>Մասնավոր հողերի օգտագործումը բացառելու նպատակով Խորհրդատուն իրականացրել է կադաստրային քարտեզների և տեղանքի մանրակրկիտ ուսումնասիրություն, և վերջնականապես ճշտելով հողերի կարգավիճակը, համոզվել է, որ նախագիծը չի ենթադրում մասնավոր հողի օգտագործում: |
| 10 | **Բողոքների լուծման մեխանիզմ**<br>Բողոքների լուծման մեխանիզմը (ԲԼՄ) մի համակարգ է, որի միջոցով քաղաքացիները կարող են հաղորդել ծրագրին առնչվող իրենց հարցերն, առաջարկություններն ու մտահոգությունները և ժամանակին արձագանք ստանալ: Ջրային կոմիտեն կստեղծի Բողոքների լուծման հանձնաժողով (ԲԼՀ) ազդեցություն կրած մարդկանց մտահոգություններին և բողոքներին պրոակտիվ և արագ կերպով արձագանքելու համար՝ օգտագործելով հասկանալի և թափանցիկ գործելակերպ, որը հասանելի է ազդեցություն կրած բոլոր մարդկանց և շահառու համայնքների համար անվճար հիմունքներով: ԲԼՀ-ն կազմված կլինի Ջրային կոմիտեի անձնակազմից: ԲԼՀ-ն կհամագործակցի տեղական ինքնակառավարման մարմինների հետ և կներգրավվի նրանց Բողոքների լուծման մեխանիզմում: Տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց համայնքներին տեղեկություն կտրամադրեն այն մասին, թե ինչպես տարբեր ուղիներով արտահայտեն իրենց բողոքները (անձամբ համայնքային պատասխանատուների միջոցով, հեռախոսով, էլ. փոստով կամ առցանց) և անհրաժեշտության դեպքում կաջակցեն նրանց: Շահագրգիռ կողմերի, ազդակիր համայնքների և ՀԿ-ների բողոքները և դժգոհությունները կներկայացվեն Ջրային կոմիտեին: Մեխանիզմը չի խոչընդոտի երկրի դատական և վարչական միջոցների հասանելիությանը: Շինարարական աշխատանքներից առաջ ՋՏԾԻԳ-ը շահառու համայնքներին կտեղեկացնի բողոքների լուծման մեխանիզմների մասին և կտրամադրի համայնքում բողոքների հավաքագրման և արձագանքման համար պատասխանատու անձանց կոնտակտային տվյալները: Ջրային կոմիտեն նաև կբացատրի որոշ կամավորներ (միգուցե ջրօգտագործողներ) ընտրելու կարևորությունը, որոնք կարող են համայնքում բողոքների գրանցման պատասխանատու հանդիսանալ՝ անհրաժեշտության դեպքում իրենց գյուղի բնակիչներին բողոքների լուծման կամ արագացման հարցում աջակցելու համար:<br>Այնուամենայնիվ, վերը նշված բողոքների լուծման մեխանիզմը չի սահմանափակում քաղաքացիների՝ բողոքների գործընթացի հենց առաջին փուլում գործը անմիջապես դատարան ներկայացնելու իրավունքը: Բողոքների մեխանիզմը մշակվել է երկար դատական ընթացակարգերից խուսափելու համար: Տվյալ մեխանիզմը պետք է այնպես իրականացվի, որպեսզի մարդկանց |

| | |
|---|---|
| | խնդիրները և դժգոհությունները ժամանակին և արդյունավետ կերպով արձագանք և լուծում ստանան՝ առանց անմիջապես դատարան դիմելու: Հանձնաժողովը բոլոր բողոքներին կարձագանքի դրանք ստանալուց հետո մեկ շաբաթվա ընթացքում և համապատասխան լուծում կտա դրանք ստանալուց հետո առավելագույնը մեկ ամսվա ընթացքում:<br>Հանրային խորհրդատվությունների ընթացքում ազդակիր համայնքները և տնային տնտեսությունները, տեղական ինքնակառավարման մարմինները և ՀԿ-ները կտեղեկանան ԲԼՄ-ի, շինհրապարակներում և գյուղապետարաններում փակցված պաստառների (շինարարական աշխատանքների վերաբերյալ) մասին, որպեսզի շինարարության և շահագործման փուլերում ազդեցություն կրած անձիք կարողանան ներկայացնել իրենց կարծիքները և բողոքները:<br>ԶԿ-ն բոլոր ստացված դժգոհությունների և հարցերի համար մանրամասն մատյան կվարի, որտեղ կնշվի ներկայացման ամսաթիվը, բողոք ներկայացնող անձի անունը, բողոքի բնույթը, պատասխանի ամսաթիվը, բողոքի վերջնական կարգավիճակի վերաբերյալ տեղեկությունը և անհրաժեշտության դեպքում ցանկացած այլ հետագա գործողությունները: |
| Օրենսդրություն | |
| 12 | **Տեղեկություններ ազգային օրենսդրության վերաբերյալ, որի համաձայն իրականացվում են ենթածրագրի աշխատանքները՝ (i) թույլտվությունների, լիցենզիաների և այլ համաձայնությունների տեսակներ, որոնք անհրաժեշտ է ձեռք բերել ենթածրագրի նախագծման, շինարարության և շահագործման փուլերում և (ii) մարմիններ, որոնք դիմում և ստանում են այդ փաստաթղթերը:**<br>***Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումուն***<br>ՀՀ Սահմանադրության 10-րդ հոդվածը (ընդունվել է 1995թ.), սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության և վերարտադրության, բնական պաշարների բանական օգտագործման վերաբերյալ: Խնդրին առնչվող բնապահպանական և բնառեսուրսային օրենքներ են հրապարակվել շրջակա միջավայրի պահպանության վերաբերյալ: Հայաստանում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման համակարգը կառավարվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով, որն ընդունվել է 2014թ. հունիսի 21-ին: Սույն օրենքը կարգավորում է ՀՀ-ում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, սույն օրենքից, իրավական այլ ակտերից և օրենքից բխող ենթաօրենսդրական ակտերից:<br>Այդուհանդերձ, նախագծերի շրջանակներում իրականացվող աշխատանքները ենթակա չեն բնապահպանական փորձաքննության, քանի որ նախատեսված աշխատանքները ներառված չեն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի Հոդված 14-ի ներքո: ***Նախագծային փուլ***<br>- բնապահպանական փորձաքննության եզրակացություն (ՀՀ Բնապապանության նախարարություն),<br>- քաղաքաշինական փորձաքննության եզրակացություն (ՀՀ Քաղաքաշինության նախարարության կողմից լիցենզավորված կազմակերպություն):<br><br>***Շինարարության փուլ***<br>- թույլտվություններ տեղական ինքնակառավարման մարմիններից շինարարական/ ապամոնտաժման աշխատանքների համար՝ նախքան շինարարական աշխատանների մեկնարկը,<br>- ՏԻՄ-երի կողմից տեղեկատվության տարածման աշխատանքներ՝ բնակչությանը/ շահառուներին ծրագրի վերաբերյալ իրազեկելու նպատակով, |

| | |
|---|---|
| | - տեղական ինքնակառավարման մարմիններից թափոնների ու շինարարական աղբի տեղադրման սահմանված վայրերի վերաբերյալ համաձայնությունները (շինարարության կապալառուներ),<br>- պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության պետական գործակալության համաձայնությունը, եթե անսպասելիորեն հայտնաբերվում են պատմամշակութային կամ հնագիտական հուշարձաններ՝ շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում (շինարարության կապալառուներ):<br>- քաղաքաշինական և բնապահանական նորմերի կիրառման նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է համապատասխանաբար ՀՀ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի և Քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից: Որոշակի գործառույթներ և մասնակցություն կարող են ունենալ մարզետարաններն ու համայնքապետարաններն՝ իրենց վերապահված լիազորությունների շրջանակում: |
| Հանրային խորհրդատվություն | |
| 13 | Ծրագրում ընդգրկված ազդակիր համայնքներում ՕԿՋ-ների կառուցման, վերակառուցման կամ նորոգման աշխատանքների մեկնարկից առաջ կազմակերպվել են հանրային իրազեկման հանդիպումներ:<br><br>***<u>Լոռու մարզի</u>*** Խնկոյան, Ջրաշեն և Օձուն բնակավայրերում և Սպիտակ քաղաքում 2022 թվականի դեկտեմբերի 20-ին կազմակերպվել է հանրային իրազեկման միջոցառում, ուտեղ հրավիրվել են բնակիչներ Խնկոյան, Ջրաշեն, Այգեհատ, Օձուն բնակավայրերից և Սպիտակ քաղաքից: Միջոցառման ընթացքում ներկայացվել է բնապահպանական և սոցիալական հաշվետվության մանրամասները, ինչպես նաև քննարկվել են աշխատանքների նախագծերը:<br>Հանդիպման ընթացքում պարզ դարձավ, որ Լոռու մայր ջրանցքի ն2 470+00 հատվածում բնական թասի օգտագործմամբ, հողային պատվարով, մինչև 50 հազ. խմ ծավալով ՕԿՋ կառուցում համար Այգեհատ բնակավայրում նախատեսված տարածքը չունի կադաստրային վկայական: Ներկայումս Ալավերդու համայնքապետարանը զբաղվում է նոր կադաստրային վկայականի ձեռք բերման և անհրաժեշտության դեպքում հողի նպատակային նշանակության փոփոխման հարցերով:<br>***<u>Տավուշի մարզի</u>*** Նոյեմբերյան քաղաքում 2022 թվականի հունվարի 23-ին կազմակերպվել է հանրային միջոցառում, ուտեղ հրավիրվել են բնակիչներ Դովեղ և Կոթի բնակավայրերից: Միջոցառման ընթացքում ներկայացվել է բնապահպանական և սոցիալական հաշվետվության մանրամասները, ինչպես նաև քննարկվել են աշխատանքների նախագծերը:<br>Դովեղ և Կոթի բնակավայրերի կադաստրային քարտեզների կորդինատները չէին համապատասխանում նախագծող ընկերության կողմից կադաստրի կոմիտեից ձեռք բերված կորդինատների հետ, ինչպես նաև համաձայն կոթի բնակավայրի քարտեզի նախագծված տարածքի փոքր հատված պատկանում է բնակչի:<br>Ներկայումս Նոյեմբերյանի համայնքապետարանի կողմից ընթանում են կորդինատների ճշգրտման աշխատանքներ:<br>***<u>Արագածոտնի մարզի</u>*** Թալին և Աշտարակ քաղաքներում, ինչպես նաև Արուճ բնակավայրում 2022 թվականի դեկտեմբերի 27-ին կազմակերպվել է հանրային իրազեկման միջոցառում, ուտեղ հրավիրվել են բնակիչներ Խնկոյան, Ջրաշեն, Այգեհատ, Օձուն բնակավայրերից և Սպիտակ քաղաքից: Միջոցառման ընթացքում ներկայացվել է բնապահպանական և սոցիալական հաշվետվության մանրամասները, ինչպես նաև քննարկվել են աշխատանքների նախագծերը:<br><br>Հանրային քննարկումների արձանագրությունները կցված են ԲՍԿՊ նախագծին (Առդիր 1): |
| Առդիրներ | |
| 14 | **Առդիր 1 - Համայնքներում հանրային իրազեկման հանդիպումների արձանագրություն**<br><br>**Առդիր 2 – Համայնքների համաձայնությունները ծրագրի իրականացման վերաբերյալ և Շինարարական աղբի տեղափոխման վայրի մասին գրությունները**<br>**Առդիր 3 – Հատակագծեր** |

## ՄԱՍ 2.ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵՂՄԱՑՄԱՆ ՊԼԱՆ

| ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ | ՊԱՐԱՄԵՏՐ | ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ |
|---|---|---|
| **Ընդհանուր** | Ծանուցում | (ա) Բնակչությունը տեղեկացված է աշխատանքների մասին մամուլի և/կամ հանրամատչելի վայրերում (ներառյալ շինհրապարակը) համապատասխան ծանուցումների միջոցով<br>(բ) Ձեռք են բերվել պահանջվող իրավական բոլոր թույլտվությունները, համաձայնությունները, լիցենզիաները և ձևակերպումները՝ ծրագրի գործողությունների համար<br>(գ) Կապալառուն պաշտոնապես համաձայնում է, որ բոլոր աշխատանքները կկատարվեն անվտանգ և կարգապահ ձևով՝ նվազեցնելու ազդեցությունները մերձակայքում բնակվողների և շրջակա միջավայրի վրա |
| | Բանվորների անվտանգություն | (ա) Բանվորների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն միջազգային լավագույն գործելակերպին (սաղավարտներ, անհրաժեշտության դեպքում դիմակներ ու պաշտպանիչ ակնոցներ, արտահագուստ ու պաշտպանիչ կոշիկներ, և այլն)<br>(բ) Շինհրապարակում առկա են առաջին բժշկական օգնության արկղիկներ և կրակմարիչներ<br>(գ) Շինհրապարակում տեղադրված են համապատասխան ցուցանակներ, որոնք տեղեկացնում են աշխատողներին արտակարգ իրավիճակների ծառայությունների (շտապ օգնություն, հրշեջ ծառայություն) հետ կապվելու տեղեկությունները |
| **Ազդեցություն կենսաբազմազանության վրա** | Բուսական աշխարհ | - Նվազագույնի հասցնել բույսերի վրա ազդեցությունները՝ պլանավորելով և իրականացնելով հողային մեծածավալ աշխատանքներ բուսականության ակտիվ ժամանակահատվածից դուրս (եթե շինարարական աշխատանքներն իրականացվում են բնական լանդշաֆտներում կամ հարակից տարածքում),<br>- Խստորեն վերահսկել բուսականության մաքրումը վերանորոգվող ջրանցքների երկայնքով՝ նախատեսված գոտուց դուրս ազդեցությունները կանխելու համար |
| | Կենդանական աշխարհ | - Սահմանափակել կենսամիջավայրերի խաթարումը՝ սահմանափակելով շինարարական գործողությունները խողովակաշարերի գծի երկայնքով նեղ միջանցքով: Չթույլատրել տրանսպորտային միջոցների / մեքենաների տեղաշարժը և շինարարական նյութերի / թափոնների անխնամ տեղակայումը ծրագրի տեղամասին հարող չափազանց մեծ տարածքներում,<br>- Անհրաժեշտ է մշակել հողային աշխատանքների ժամանակացույց, որը թույլ կտա կանխել հողային աշխատանքները կենդանիների ձմեռման և վերարտադրության ընթացքում: |
| **Աղտոտման կառավարում** | Օդի որակ | (ա) Շինարարական տեխնիկան և սարքավորումները պետք է պարբերաբար և համապատասխան կերպով շահագործվեն և սպասարկվեն:<br>(բ) Փորված/հանված գրունտի կույտերը պետք է տոփանվեն<br>(գ) Փոշու աղբյուրները պետք է ջրցանվեն՝ մոտակայքում ապրող բնակիչներին պատճառվող անհանգստությունը նվազագույնի հասցնելու համար:<br>(դ) Նյութերը և թափոնները պետք է տեղափոխվեն ծածկված թափք ունեցող բեռնատարով:<br>(ե) Մեքենաների շարժման արագությունը պետք է հսկողության տակ լինի՝ կրճատելու ճանապարհային փոշու առաջացումը |
| | Աղմուկ | (ա) Շինարարության ընթացքում աղմուկի առաջացումը բնակավայրերի մոտակայքում պետք է սահմանափակվի աշխատանքային ժամերով<br>(բ) Աշխատանքի ընթացքում պետք է օգտագործվեն փակ/ծածկված գեներատորներ, օդի կոմպրեսորներ և այլ հզոր մեխանիկական սարքավորումներ, և սարքավորումները պետք է տեղադրվեն բնակելի տարածքներից հնարավորինս հեռու |

| | | |
|---|---|---|
| | Թափոն | (ա) Աղբի տեղափոխման մշտական աղբավայրերը պետք է որոշվեն և համաձայնեցվեն տեղական մարմինների հետ<br>(բ) Պետք է հատկացվեն աղբի ժամանակավոր տեղափոխման աղբավայրեր՝ շինհրապարակում և դրա ծուրջը աղբի ցաքուցրիվ կուտակումներից խուսափելու համար<br>(գ) Հնարավորության դեպքում պետք է իրականացվի շինարարական թափոնների վերամշակում և վերօգտագործում (բացի ազբեստից)<br>(դ) Հավաստագրված ընկերությունների հետ պետք է ձեռքբերվեն համաձայնություններ՝ շինարարական մեքենաների և<br>մեխանիզմների օգտագործված անվադողերի և ֆիլտրերի հեռացման և վերամշակման համար։<br>(ե) Շինարարության թափոնների բացօթյա այրում շինհրապարակում չպետք է թույլատրվի։ |
| **Էռոզիայի կառավարում** | | (ա) Պետք է իրականացվի շեպերի պաշտպանություն՝ ափերի ամրացման, կարևոր հատվածներում թմբապատման, կամ բուսականությամբ ամրացման միջոցով<br>(բ) Հողաբուսական շերտը պետք է հեռացվի և պահեստավորվի՝ տեղամասի հետագա վերականգնման համար օգտագործման նպատակով<br>(գ) Ավելցուկային նյութերը պետք է օգտագործվեն վնասված տարածքների վերականգնման համար։ |
| **Պատահական գտածոներ** | | (ա) Հողային աշխատանքների ժամանակ հայտնաբերված պատահական գտածոներ հայտնաբերելու դեպքում գործունեությունը պետք է դադարեցվի, գրավոր ծանուցում պետք է ուղարկվի ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, աշխատանքը պետք է վերսկսվի վերոնշյալ մարմնից պաշտոնական թույլտվություն ստանալուց հետո։ |
| **Ջրային մարմինների պահպանություն** | Պղտորություն | (ա) Գետերի երկայնքով պետք է տեղադրվեն տղմորսիչներ և/կամ ափերի երկայքով՝ գաբիոններ, հողամտարված նստվածնքերի ֆիլտրման համար<br>(բ) Էռոզիայի հսկողության միջոցառումները պետք է կիրառվեն վերը նկարագրված ձևով։ |
| | Աղտոտում | (ա) Ջրային մարմինների անմիջական հարևանությամբ պետք է արգելվի մեքենաների և մեխանիզմների սպասարկումը։<br>(բ) Մեքենաների և մեխանիզմների սպասարկումը և վառելիքով լցավորումը պետք է սահմանափակվի անթափանց հատակ և վառելիքը թափվելու դեպքում արտահոսքը պահելու ծավալ ունեցող հատուկ հատկացված տարածքներում<br>(գ) Հավաստագրված ընկերությունների հետ պետք է ձեռքբերվեն համաձայնություններ՝ օգտագործված յուղերի և նավթամթերքներով ներծծված ավազի/խճի վերամշակման/դեակտիվացման համար։ |
| **Չպայթած ականների վտանգ** | Վտանգ մարդու առողջության և անվտանգության համար | Նախքան փորման աշխատանքների սկիզբը Կապալառուն պետք է հավաստիանա, որ տեղանքը ստուգվել և մաքրվել է չպայթած ականներից՝ պատկան մարմինների կողմից։ |
| **Սոցիալական ռիսկի կառավարում** | Հանրային կապերի կառավարում | (ա) Նշանակել տեղացի միջնորդ անձ, ով պատասխանատու կլինի տեղի բնակչության հետ հաղորդակցման և նրանց խնդրանքներն ու բողոքները ստանալու համար,<br>(բ) Ներկայացնել ԲԼՄ-ն և վարել ԲԼՄ մատյան ազդակիր բոլոր համայնքներում և շինարարության տեղամասերում,<br>(գ) Խորհրդակցել տեղացի բնակչության հետ պարզելու արտաքին աշխատուժի և տեղացիների միջև պոտենցիալ կոնֆլիկտները՝ դրանք կառավարելու նպատակով,<br>(դ) Բարձրացնել համայնքի իրազեկվածությունը սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների վերաբերյալ՝ պայմանավորված համայնքում արտաքին աշխատուժի առկայությամբ՝ ներառելով տեղացիներին իրազեկման աշխատանքներում,<br>(ե) Ծրագրի աշխատանքները պետք է հնարավորինս պլանավորվեն ոռոգման սեզոնից հետո՝ սպասարկման ընդհատումներից խուսափելու/ դրանք նվազագույնի հասցնելու համար; Իրազեկել տեղի բնակչությանը շինարարության և այլ աշխատանքների ժամանակացույցի, ծառայությունների |

| | | |
|---|---|---|
| | | ընդհատման, երթևեկության ուղղության փոփոխման և ավտոբուսի ժամանակավոր երթուղիների, պայթեցման և ապամոնտաժման վերաբերյալ՝ ըստ համապատասխանության,<br><br>(զ) Սահմանափակել շինարարական աշխատանքները գիշերվա ժամերին: Անհրաժեշտության դեպքում զգուշորեն պլանավորել գիշերային աշխատանքը՝ նախապես իրազեկելով ազդակիր համայնքին,<br><br>(է) Շինհրապարակը պետք է պատշաճ կերպով մակնիշվի և ցանկապատվի,<br><br>(ը) Մշակվող հողատարածքներում կամ որևէ տեսակի մասնավոր սեփականության տարածքում չպետք է ժամանակավորապես պահվեն շինանյութեր կամ թափոններ:<br><br>(թ) Շինանյութերի և թափոնների ժամանակավոր պահեստավորման տարածքները պետք է հատկացված լինեն այնպես, որ չխանգարեն ազատ երթևեկությանը և հետիոտների տեղաշարժին:<br><br>(ժ) Կապալառուի կողմից հասցված պատահական վնասները վերականգնվում են: |
| | Աշխատանքի կառավարում | (ա) Հնարավորության դեպում մի տեղադրեք շինարարական հրապարակները համայնքների մոտ հարևանությամբ,<br><br>(բ) Շինարարական հրապարակները  տեղադրեք և շահագործեք հարևան համայնքների հետ խորհրդակցելուց հետո,<br><br>(գ) Հնարավորինս ներգրավեք տեղացի չորակավորված և կիսաորակավորված աշխատուժը շինարարական աշխատանքներում, հնարավորության դեպքում պետք է բարելավել տեղացիների աշխատանքային հմտությունները՝ աշխատանքներում նրանց մասնակցությունը խթանելու նպատակով,<br><br>(դ) Շինհրապարակներում ապահովել զուգարանների և լվացվելու հարմարությունները համապատասխան պարագաներով՝ տաք և սառը հոսող ջուր, օճառ, ձեռքերը չորացնող սարքեր: Ցանկացած շինհրապարակ, որը նաև աշխատուժի բնակման վայր է հանդիսանում, պետք է ունենա ժամանակավոր սեպտիկ ավազան՝ մոտակա ջրային ավազանները չաղտոտելու համար,<br><br>(ե) Բարձրացնել բանվորների իրազեկումը տեղացի բնակչության հետ հարաբերությունների կառուցման վերաբերյալ, մշակել վարքագծի կանոնակարգ միջազգային գործելակերպի համաձայն և խստագույնս կիրառել այն՝ ներառյալ աշխատանքից հեռացնելը և ֆինանսական պատժամիջոցների կիրառելը: |

## ՄԱՍ 3: ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

| Ի՞նչ (պարամետր է մշտադիտարկվելու) | Որտե՞ղ (է պարամետրը մշտադիտարկվելու) | Ինչպե՞ս (է պարամետրը մշտադիտարկվելու) | Ե՞րբ (Սահմանել հաճախականությունը կամ շարունակականությունը) | Ինչու՞ (է պարամետրը մշտադիտարկվելու) | Արժեքը (Եթե ներառված չէ ծրագրի բյուջեում) | Ո՞վ (է պատասխանատու մշտադիտարկման համար) |
|---|---|---|---|---|---|---|
| **ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼ** | | | | | | |
| 1. Ծանուցում | Տեղամասում, ազդակիր համայնքներում | ա) Բնակչությունը տեղեկացված է աշխատանքների մասին մամուլի և/կամ հանրամատչելի վայրերում (ներառյալ շինհրապարակը) համապատասխան ծանուցումների միջոցով<br>(բ) Ձեռք են բերվել պահանջվող իրավական բոլոր թույլտվությունները, համաձայնությունները, լիցենզիաները և ձևակերպումները՝ ծրագրի գործողությունների համար | Նախքան շինարարության մեկնարկը | Ապահովել, որպեսզի շինարարության վերաբերյալ պահանջվող տեղեկատվությունը հասանելի լինի ազդակիր համայնքներին | Ներառված է ծրագրի բյուջեում | ՁԿ (վերահսկող խորհրդատուի միջոցով) |
| 2. Բանվորների անվտանգություն | Տեղամասում | (ա) Բանվորների անհատական պաշտպանության միջոցները համապատասխանում են միջազգային լավագույն գործելակերպին (սաղավարտներ, անհրաժեշտության դեպքում դիմակներ ու պաշտպանիչ ակնոցներ, արտահագուստ ու պաշտպանիչ կոշիկներ, և այլն)<br>(բ) Շինհրապարակում առկա են առաջին բժշկական օգնության արկղիկներ և կրակմարիչներ<br>(գ) Շինհրապարակում տեղադրված են համապատասխան ցուցանակներ, որոնք տեղեկացնում են աշխատողներին արտակարգ իրավիճակների ծառայությունների (շտապ օգնություն, հրշեջ ծառայություն) հետ կապվելու տեղեկությունները | Ամսական | Շինարարական տեղամասում բանվորների առողջության անվտանգության համար | Ներառված է ծրագրի բյուջեում | ՁԿ (վերահսկող խորհրդատուի միջոցով) |
| 3. Կենսաբազմազանություն | Տեղամասում | Բուսական աշխարհ<br>- Նվազագույնի են հասցված բույսերի վրա ազդեցությունները՝ պլանավորելով և իրականացնելով հողային մեծածավալ աշխատանքներ բուսականության ակտիվ ժամանակահատվածից դուրս (եթե շինարարական աշխատանքներն իրականացվում են բնական լանդշաֆտներում կամ հարակից տարածքում),<br>- Խստորեն վերահսկվում են բուսականության մաքրումը վերանորոգվող ջրանցքների երկայնքով՝ | Ամսական, շինարարության ամբողջ ընթացքում | Կենսաբազմազանության վրա ազդեցությունը նվազեցնելու նպատակով | Ներառված է ծրագրի բյուջեում | ՁԿ (վերահսկող խորհրդատուի միջոցով) |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | նախատեսված գոտուց դուրս ազդեցությունները կանխելու համար<br>Կենդանական աշխարհ<br>- Սահմանափակված է կենսամիջավայրերի խաթարումը՝ սահմանափակելով շինարարական գործողությունները խողովակաշարերի գծի երկայնքով նեղ միջանցքով: Չի թույլատրվում տրանսպորտային միջոցների / մեքենաների տեղաշարժը և շինարարական նյութերի / թափոնների անխնամ տեղակայումը ծրագրի տեղամասին հարող չափազանց մեծ տարածքներում,<br>- Մշակված է հողային աշխատանքների ժամանակացույց, որը թույլ է տալիս կանխել հողային աշխատանքները կենդանիների ձմեռման և վերարտադրության ընթացքում: | | | | |
| 4. Պատահական գտածոներ | Տեղամասում | Հողային աշխատանքների ժամանակ պատահական գտածոներ հայտնաբերելու դեպքում գործունեությունը դադարեցվում է, գրավոր ծանուցում է ուղարկվել ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն, աշխատանքը կվերսկսվի ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից պաշտոնական թույլտվություն ստանալուց հետո: | Շարունակական | Մշակութային ժառանգությունը շինարարական աշխատանքների ընթացքում վնասվելուց ապահովելու նպատակով | Ներառված է ծրագրի բյուջեում | ՋԿ (վերահսկող խորհրդատուի միջոցով) |
| 5. Փոշի | Տեղամասում | Շին. տեղամասում չափից ոչ ավելի փոշու առկայություն | Ամսական | Շինարարական աշխատանքների դեպքում օդի հիմնական աղտոտիչը փոշին է, որի ազդեցությունը թեև ժամանակավոր կլինի, սակայն այն կարող է բացասաբար ազդել ինչպես շրջ. Միջավայրի, այնպես էլ աշխատողների ու տեղի բնակիչների վրա | Ներառված է ծրագրի բյուջեում | ՋԿ (վերահսկող խորհրդատուի միջոցով)<br>Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին |
| 6. Շին. և կենցաղային աղբ | Տեղամասում | - Շին. հրապարակը հիմնվել է համայնային հողի վրա, որի համար նախապես կապալառուն ձեռք է բերել համայնքի համաձայնությունը,<br>- շին. և կենցաղային աղբ թափված չեն շին. հրապարակում,<br>- շին. աղբը տեղադրված է շին. հրապարակում հատուկ առանձնացված տարածքում, | Ամսական | - հողի և ջրի աղտոտվածություն<br>- տարածքի էսթետիկ տեսքի վատթարացում,<br>- անհանգստություններ բնակչությանը համար | Ներառված է ծրագրի բյուջեում | ՋԿ (վերահսկող խորհրդատուի միջոցով)<br>Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | - կենցաղային աղբը հավաքված է շին. աղբից առանձին՝ հատուկ կոնտեյներների մեջ,<br>- շին հրապարակում չկան աղբի այրման տեսանելի նշաններ,<br>- կապալառուի կողմից ձեռք է բերված թափոնների վերջնական տեղադրման համաձայնությունը,<br>- թափոնները տեղադրված են դրանց համար պաշտոնապես համաձայնեցված վայրերում | | | | |
| 7. Աղմուկ | Տեղամասում | - Շին. տեղամասում աղմուկի չափից ոչ ավել լսելիություն,<br>- բնակչության կողմից բողոքների բացակայություն | Ամսական | Աշխատողների և բնակիչների անվտանգության նպատակով | Ներառված է ծրագրի բյուջեում | ՁԿ (վերահսկող խորհրդատուի միջոցով)<br>Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին |
| 8. Հողի բերրի շերտ | Տեղամասում | - Հողի վերին շերտի հեռացում և պահեստավորում:<br>- բուսածածկի հետագա վերօգտագործում՝ շինարական տեղամասի վերականգնման նպատակով: | - Հողային աշխատանքների ընթացքում<br>- հողային աշխատանքների ավարտից հետո | Հողի բերրի շերտի պահպանման նպատակով | Ներառված է ծրագրի բյուջեում | ՁԿ (վերահսկող խորհրդատուի միջոցով)<br>Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին |
| 9. Հանրային կապերի կառավարում | Տեղամասում, ազդակիր համայնքներում | - Տեղացի միջնորդ անձ է նշանակվել, ով պատասխանատու կլինի տեղի բնակչության հետ հաղորդակցման և նրանց խնդրանքներն ու բողոքները ստանալու համար,<br>- ԲԼՄ-ն ներկայացված է և ԲԼՄ մատյանն առկա է/վարվում է ազդակիր բոլոր համայնքներում և շինարարության տեղամասերում,<br>- Ծրագրի աշխատանքները պլանավորվում են ոռոգման սեզոնից հետո՝ սպասարկման ընդհատումներից խուսափելու/ դրանք նվազագույնի հասցնելու համար;<br>- Տեղի բնակչությունն իրազեկված է շինարարության և այլ աշխատանքների ժամանակացույցի, ծառայությունների ընդհատման, երթևեկության ուղղության փոփոխման և ավտոբուսի ժամանակավոր երթուղիների, պայթեցման և ապամոնտաժման վերաբերյալ՝ ըստ համապատասխանության,<br>(զ) Գիշերվա ժամերին շինարարական աշխատանքները սահմանափակ են, | Ամսական, շինարարության ամբողջ ընթացքում | Համայնքի առողջության և անվտանգության, չընդհատվող ոռոգման, մասնավոր սեփականությունը վնասից պաշտպանելու և ազատ տեղաշարժի համար | Ներառված է ծրագրի բյուջեում | ՁԿ (վերահսկող խորհրդատուի միջոցով) |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | (է) Շինհրապարակը պատշաճ կերպով մակնիշված է և ցանկապատված,<br>(ը) Մշակվող հողատարածքներում կամ որևէ տեսակի մասնավոր սեփականության տարածքում ժամանակավորապես չեն պահվում շինանյութեր կամ թափոններ։<br>(թ) Շինանյութերի և թափոնների ժամանակավոր պահեստավորման տարածքները հատկացված այնպես, որ չխանգարեն ազատ երթևեկությանը և հետիոտների տեղաշարժին։<br>(ժ) Կապալառուի կողմից հասցված պատահական վնասները վերականգնվում են։ | | | | |
| 10. Աշխատանքի կառավարում | Տեղամասում | ա) Շինարարական հրապարակները հնարավորության դեպքում տեղակայված չեն համայնքների մոտ հարևանությամբ,<br>(բ) Շինարարական հրապարակները տեղակայված են և շահագործվում են հարևան համայնքների հետ խորհրդակցելուց հետո,<br>(գ) Հնարավորինս ներգրավված է տեղացի չորակավորված և կիսաորակավորված աշխատուժը շինարարական աշխատանքներում՝ ներառյալ կանայք,<br>(դ) Շինհրապարակներն ապահովված են զուգարաններով և լվացվելու հարմարություններով,<br>(ե) Մշակված է միջազգային գործելակերպին համապատասխան Վարքագծի կանոնագիրք, որը խստությամբ կիրառվում է։ | Ամսական, շինարարության ամբողջ ընթացքում | Աշխատանքի միջազգային չափորոշիչները պահպանելու նպատակով | Ներառված է ծրագրի բյուջեում | ՋԿ (վերահսկող խորհրդատուի միջոցով) |
| 11. Նախագծի վերանայում | Տեղամասում | Կատարվել է նախագծի փոփոխություն, ներառյալ ենթակառուցվածքի տեղադիրքի և ծավալի փոփոխություն շինարարության ընթացքում անկանխատեսելի խոչընդոտների պատճառով։ | Ամսական, շինարարության ամբողջ ընթացքում | Նախագծի մեջ նոր ընդգրկված հողերի օգտագործումը, նրանց սեփականության կարգավիճակը, համայնքային հողերի օգտագործման համաձայնությունների առկայությունը վերահսկելու նպատակով | Ներառված է ծրագրի բյուջեում | ՋԿ (վերահսկող խորհրդատուի միջոցով) |
| ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՒԼ | | | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Ոռոգման ջրի որակ | | Ջրանցքից վերցված ջրի քիմիական անալիզ | Ոռոգման ջրի համար անսովոր գույն, հոտ և այլ բնութագրիչներ հայտնաբերելու դեպքում | Հողը, գրունտային ջրերը և բերքը<br>հնարավոր վտանգավոր աղտոտումներից պաշպանելու նպատակով | ՋՕԸ-երի ընթացիկ ծախս | ՋԿ<br>Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին |
| 2. | Վերականգնված ջրանցքների տեխնիկական վիճակ | Ջրանցի ողջ երկայնքով | - ջրանցքները խցանված չեն տիղմով և աղբով,<br>- ջրանքների երեպատումը վնասված չէ և չկա արտահոսք/զերլցումը տեսանելի է<br>- չկա ապօրինի ջրօգտագործում | Ջրանցքների սեզոնային մաքրումը պետք է լինի ջրանցքի շահագործման մաս: Մաքրումից հետո առաջացած տիղմը և թափոնները պետք է տեղափոխվեն համապատասխան հեռացման վայր: | Վերականգնվող ջրանքների անխափան աշխատանքն ապահովելու նպատակով | ՋՕԸ-երի տարեկան բյուջե | ՋԿ |
| 3. | Վերականգնվող ջրանցքի սպասարկման տարածքներում թունաքիմիկատներ ի կիրառում | Տարածքների գյուղատնտեսական դաշտերում | - Ջրօգտագործողները տիրապետում են վնասատուների դեմ պայքարի նն թունաքիմիկատների կառավարման լավ փորձին<br>- Ջրօգտագործողները կիրառում են վնասատուների դեմ համալիր պայքարի միջոցներ: | | - Թունաքիկատներով հողի և ջրի աղտոտումը կանխելու նպատակով<br>- կանխելու համար թունաքիմիկատների մնացորդային քանակություն պարունակող և անհրաժեշտ նորմերին չհամապատասխանող սննդամթերքների առկայությունը | ՋՕԸ-երի տարեկան բյուջե | ՋԿ |

**Առդիր 1 - Համայնքներում հանրային իրազեկման և ԲՍԿՊ ներկայացման հանդիպումների արձանագրություն**

Լոռու մարզի Խնկոյան, Ջրաշեն, Օձուն բնակավայրերում և Սպիտակ քաղաքում 2022թ-ի դեկտեմբերի 20-ին, Տավուշի մարզի Նոյեմբերյան քաղաքում 2022թ.-ի դեկտեմբերի 23-ին, ինչպես նաև Արագածոտնի մարզի Աշտարակ, Թալին քաղաքներում, ինչպես նաև Արուճ բնակավայրում 2022թ.-ի դեկտեմբերի 27-ին կազմակերպվել է հանրային իրազեկման միջոցառում, ուտեղ հրավիրվել են բնակիչներազդակիր բնակավայրերից: Միջոցառման ընթացքում ներկայացվել է բնապահպանական և սոցիալական հաշվետվության մանրամասները, ինչպես նաև քննարկվել են աշխատանքների նախագծերը:

Մասնակիցներին ներկայացվել են շինարարության ընթացքում հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունները, դրանց բացառման և մեղմացման միջոցառումները:

Բնակչությունը տեղեկացվել է իրակացվող ծրագրի և շինարարական աշխատանքների մեկնարկի մասին: Մասնակիցներին հիմնականում մտահոգում են՝ մասնավոր հողերի օգտագործման, աղբահանության, տեղական աշխատուժի ներգրավման, շինարարության ավարտը, ոռոգման ժամանակահատվածում ոռոգման ջրի անխափան մատակարարման հարցերը: Բնակչությանը տեղեկացվել է, որ

1. Լոռու մայր ջրանցքի ևշ 470+00 հատվածում բնական թասի օգտագործմամբ, հողային պատվարով, մինչև 50 հազ. խմ ծավալով ՕԿՋ կառուցում համար Այգեհատ բնակավայրում նախատեսված տարածքը չունի կադաստրային վկայական: Ներկայումս Ալավերդու համայնքապետարանը զբաղվում է նոր կադաստրային վկայականի ձեռք բերման և անհրաժեշտության դեպքում հողի նպատակային նշանակության փոփոխման հարցերով:

2. Դովեղ և Կոթի բնակավայրերի կադաստրային քարտեզների կորդինատները չեն համապատասխանում նախագծող ընկերության կողմից կադաստրի կոմիտեից ձեռք բերված կորդինատների հետ, ինչպես նաև համաձայն Դովեղ բնակավայրի քարտեզի նախագծված տարածքի փոքր հատված պատկանում է բնակչի:

Ներկայումս Նոյեմբերյանի համայնքապետարանի կողմից ընթանում են կորդինատների ճշգրտման աշխատանքներ:

Ծրագրի պատասխանատուները ներկաներին բացատրել են, որ նախագծերի համաձայն մասնավոր հողի մշտական կամ ժամանակավոր ազդեցություն չի նախատեսվում, այդուհանդերձ շինարարության փուլում, շինարարության կապալառուն հնարավոր է պատահականորեն վնասի հարակից մասնավոր կամ հանրային գույքը, օգտագործի մասնավոր հողը: Նման դեպքերում անմիջապես հարկավոր է դիմել ծրագրի պատասխանատուներին, որպեսզի ձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ՝ մասնավոր գույքը վերականգնելու և սեփականատիրոջը փոխհատուցում տրամադրելու նպատակով:

Բոլոր հանդիպումների ժամանակ ներկայացվել են Ծրագրի բողոքների լուծման մեխանիզմը, ներառյալ նրանց կներկայացվի բողոքների լուծման հանձնաժողովի կոնտակտները, որոնք կփակցվեն համայնքապետարանների հայտարարությունների տախտակին: Ուստի, ծրագրի իրականացման ցանկացած փուլում, յուրաքանչյուր ոք, բողոքների մեխանիզմների միջոցով կարող է ներկայացնել կարծիք, բողոք կամ առաջարկություն:

Համայնքներն իրազեկվել են, որ նախագծի շրջանակներում պայմանավորվածություն է ձեռք բերվել յուրաքանչյուր համայնքի ղեկավարության հետ կենցաղային և շինարարական աղբի տեղափոխության վայրի վերաբերյալ:

**Համայնքներում հանրային իրազեկման հանդիպումների լուսանկարներ**

| | | |
|---|---|---|
| Ջրաշեն | Ջրաշեն | **Խնկոյան** |
|  |  |  |
| Խնկոյան | Սպիտակ | Օձուն |
|  |  |  |
| Աշտարակ | Աշտարակ | Թալին |
|  |  |  |
| Թալին | Արուճ | Արուճ |
|  |  |  |
| Նոյեմբերյան | Նոյեմբերյան | |
|  |  | |

Հանդիպումների մասնակիցների ցանկ























Առդիր 2 – Համայնքների համաձայնությունները ծրագրի իրականացման վերաբերյալ և Շինարարական աղբի տեղափոխման վայրի մասին գրությունները

Դովեղ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Նոյեմբերյան, Երևանյան 4, Հեռ. /0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

N Ե-01/2909
*09 դեկտեմբեր 2022թ.*

«ՄՈԴՈՒԼ» ՍՊԸ
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

Հարգելի Վ. Վարդանյան,

Ի պատասխան Ձեր 08.11.2022 թվականի 22/11/08-05 գրության հայտնում ենք, որ կառուցապատող ՀՀ ՏԿԵՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ-ի կողմից Դովեղի պոմպակայանի դոտացիոն ՕԿՋ-ի վերակառուցման համար ներկայացված նախագծման թույլտվության հայտին կից ուղարկված տեղագրական հանույթի վրա կառուցապատվող հողամասի հատակագիծ-սխեման Դովեղ բնակավայրի կադաստրային էլեկտրոնային քարտեզում ելակետային կոորդինատներով տեղադրման արդյունքում համադրվում է քաղաքացիների սեփականություն հանդիսացող հողամասերի հետ:

Հաշվի առնելով վերը նշված անհամապատասխանությունը, խնդրում ենք Դովեղի պոմպակայանի դոտացիոն ՕԿՋ-ի վերակառուցման համար նախատեսվող հողամասի հատակագիծ-սխեման կազմել տվյալ վարչական տարածքի կադաստրային քարտեզին համապատասխան՝ պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի սահմաններում:

Միաժամանակ Ի պատասխան Ձեր 08.11.2022 թվականի 22/11/08-06 գրության տեղեկացնում ենք, որ ավելցուկային բնահողի և շինարարական աղբի տեղափոխման թափոնավայրը գտնվում է մոտ 2 կմ հեռավորության վրա, իսկ փափուկ բնահողի բերման տարածքի հեռավորության մասին կտեղեկացվի Ձեզ, շինարարության համար անհրաժեշտ բնահողի ելակետային ծավալների մասին Ձեր մասնագիտական եզրակացության առկայության դեպքում:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ ԱՐՄԻՆԵ ԱՄԻՐԱՂՅԱՆ

*Կատ. Առաջատար մասնագետ՝ Հ. Սարիբեկյան*
*Հեռ. 093-44-90-97*

Կոթի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Նոյեմբերյան, Երևանյան 4, Հեռ. /0266/22703, /0266/22393, noyemberyan.tavush@mta.gov.am

N Ե-01/2913
*09 դեկտեմբեր 2022թ.*

«ՄՈԴՈՒԼ» ՍՊԸ
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

Հարգելի Վ. Վարդանյան,

Ի պատասխան Ձեր 08.11.2022 թվականի 22/11/08-10 գրության հայտնում ենք, որ կառուցապատող ՀՀՏԿԵՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵ-ի կողմից **Ոսկեպար-Բաղանիս-Ոսկեվան-Կոթի ինքնահոս ջրագծի վրա՝ Բաղանիս-Ոսկեվան № 2 նախկին պոմպակայանի տարածքում մինչև 8 հազ.խմ ծավալով ՕԿՋ-ի կառուցման** համար ներկայացված նախագծման թույլտվության հայտին կից ուղարկված տեղագրական հանույթի վրա կառուցապատվող հողամասի հատակագիծ-սխեման Կոթի բնակավայրի կադաստրային էլեկտրոնային քարտեզում ելակետային կոորդինատներով տեղադրման արդյունքում համադրվում է համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական հողամասերի հետ, կից՝ էլ. նյութ:

Հաշվի առնելով վերը նշված անհամապատասխանությունը, խնդրում ենք **Ոսկեպար-Բաղանիս-Ոսկեվան-Կոթի ինքնահոս ջրագծի վրա՝ Բաղանիս-Ոսկեվան № 2 նախկին պոմպակայանի տարածքում մինչև 8 հազ.խմ ծավալով ՕԿՋ-ի** կառուցման համար նախատեսվող հողամասի հատակագիծ-սխեման կազմել տվյալ վարչական տարածքի կադաստրային քարտեզին համապատասխան՝ պետական սեփականություն հանդիսացող, 11-040-0233-0005 և 11-040-0233-0006 ծածկագրերով հողամասերի սահմաններում:

Միաժամանակ Ի պատասխան Ձեր 08.11.2022 թվականի 22/11/08-09 գրության տեղեկացնում ենք, որ ավելցուկային բնահողի և շինարարական աղբի տեղափոխման թափոնավայրը գտնվում է 5.6 կմ հեռավորության վրա, իսկ փափուկ բնահողի բերման տարածքի հեռավորության մասին կտեղեկացվի Ձեզ, շինարարության համար անհրաժեշտ բնահողի ելակետային ծավալների մասին Ձեր մասնագիտական եզրակացության առկայության դեպքում:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ ԱՐՄԻՆԵ ԱՄԻՐԱՂՅԱՆ

*Կատ. Առաջատար մասնագետ՝ Հ. Սարիբեկյան*
*Հեռ. 093-44-90-97*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

«29» նոյեմբերի 2022թ. № 034/27-3825

«ՄՈԴՈՒԼ» ՍՊԸ-Ի ԳՈՐԾԱԴԻՐ
ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Վարդանյան.

Ի պատասխան Ձեր 08.11.2022 թվականի թիվ 22/11/08-26 գրության՝ հայտնում եմ Ձեզ, որ Սպիտակի աջափնյա պոմպակայանի ՕԿՋ-ի նորոգման աշխատանքների շինարարական աշխատանքների ընթացքում առաջացած շինարարական աղբի և ավելորդ բնահողի տեղափոխումը և կուտակումը հնարավոր է կատարել շինհրապարակից 5,5 կմ հեռավորության վրա գտնվող Սպիտակ քաղաքի աղբավայր: Միաժամանակ հայտնում եմ Ձեզ, որ Սպիտակ համայնքը չունի փափուկ բնահողի կորզման տեղամաս:

Հարգանքներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Կատարող՝ Գ. Չոբանյան
Հեռ. 0255-2-25-00

Ջրաշեն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ**

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

«29» նոյեմբերի 2022թ.    № **034/**27-3826

«ՄՈԴՈՒԼ» ՍՊԸ-Ի ԳՈՐԾԱԴԻՐ
ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Վարդանյան.

Ի պատասխան Ձեր 08.11.2022 թվականի թիվ 22/11/08-30 գրության՝ հայտնում եմ Ձեզ, որ Ջրաշենի պոմպակայանի ՕԿՋ-ի նորոգման աշխատանքների շինարարական աշխատանքների ընթացքում առաջացած շինարարական աղբի և ավելորդ բնահողի տեղափոխումը և կուտակումը հնարավոր է կատարել շինհրապարակից 7,8 կմ հեռավորության վրա գտնվող Սպիտակ քաղաքի աղբավայր: Միաժամանակ հայտնում եմ Ձեզ, որ Սպիտակ համայնքը չունի փափուկ բնահողի կորզման տեղամաս:

Հարգանքներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ______________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Կատարող՝ Գ. Չոբանյան
Հեռ. 0255-2-25-00

**Խնկոյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

«29» նոյեմբերի 2022թ. № 034/27-3824

«ՄՈԴՈՒԼ» ՍՊԸ-ի ԳՈՐԾԱԴԻՐ
ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Վարդանյան.

Ի պատասխան Ձեր 08.11.2022 թվականի թիվ 22/11/08-28 գրության՝ հայտնում եմ Ձեզ, որ Խնկոյանի պոմպակայանի ՕԿՋ-ի հիմնանորոգման աշխատանքների շինարարական աշխատանքների ընթացքում առաջացած շինարարական աղբի և ավելորդ բնահողի տեղափոխումը և կուտակումը հնարավոր է կատարել շինհրապարակից 29 կմ հեռավորության վրա գտնվող Սպիտակ քաղաքի աղբավայր: Միաժամանակ հայտնում եմ Ձեզ, որ Սպիտակ համայնքը չունի փափուկ բնահողի կորզման տեղամաս:

Հարգանքներով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Կատարող՝ Գ. Չոքանյան
Հեռ. 0255-2-25-00

Այգեհատ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ Լոռու մարզ, ք.Ալավերդի, Զ.Անդրանիկի 8/1, Հեռ. (0253) 2-41-00
Էլ. փոստ՝ alaverdi.lori@mta.gov.am

N 2113
*23 նոյեմբեր 2022թ.*

**«ՄՈԴՈՒԼ» ՍՊԸ**
**ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ**
**Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ**

Ի պատասխան Ձեր 10/11/2022թ. մտից N 3007 գրության.

Ալավերդի համայնքի Այգեհատ վարչական տարածքում ՕԿՋ-ի կառուցման նախագծման թույլտվություն տրամադրելու կապակցությամբ հայտնում ենք, որ մինչև 50 հազ. խմ ծավալով ՕԿՋ կառուցելու համար Ձեր կողմից նշված հատվածում հողամաս հատկացված չէ, անշարժ գույքի նկատմամբ սեփականության կամ օգտագործողի՝ անշարժ գույքը փոփոխելու իրավունքը հաստատող փաստաթուղթ առկա չէ, բացի այդ նախատեսվող հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները չեն համապատասխանում կառուցապատման նպատակին: Ելնելով նշված հանգամանքներից, անհրաժեշտ է պատվիրատուի համապատասխան գրություն հողամասի հատկացման վերաբերյալ, որը կներկայացվի համայնքի ավագանու քննարկմանը, ինչպես նաև կկատարվի պարզեցված կարգով նպատակային նշանակության փոփոխությունը համաձայնեցնելու ընթացակարգ:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԿԱԴԻ ԹԱՄԱԶՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

ԹԱԼԻՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

REPUBLIC OF ARMENIA
ARAGATSOTN MARZ

MUNICIPALITY OF TALIN

0501 ք. Թալին, Գայի 1
Հեռ.՝ (0249) 2-25-46, 2-24-19
Էլ. հասցե: taliniqaxaqapetaran@list.ru

0501 t. Talin
Tel: (0249) 2-25-46, 2-24-19
E-mail: taliniqaxaqapetaran@list.ru

№ 056/124

17 01 2023 թ.

«ՄՈԴՈՒԼ» ՍՊԸ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ
ՊԱՐՈՆ Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Վարդանյան

Ի լրումն մեր թիվ 056/831 գրության հայտնում ենք Ձեզ, որ Ներքին Բազմաբերդի ՕԿՋ-ի հիմնանորոգման շինարարական աշխատանքների համար պահանջվող քարի ձեռքբերման տարածքներ կարող են հանդիսանալ համայնքային սեփականություն հանդիսացող քարային զանգվածների բնական տեղակայման վայրեր, որոնց հեռավորությունը շինհրապարակից կազմում է 8 կմ շառավղով:

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Տ. ՍԱՓԵՅԱՆ

Մուղնի և Արուճ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ
**ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**
ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու անվան հրապարակ 7, 0201
հեռ. /0232/ 3-10-26, ashtarakmunicipality@gmail.com

*18 ՀՈՒՆՎԱՐԻ 2023թ.*
*ԹԻՎ 238*

<ՄՈԴՈՒԼ> ՍՊԸ
ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆ
Վ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 23/01/13-01, 13.01.2023թ. և ի լրումն մեր 08.12.2022թ. N6226 և 16.12.2022թ. N 6362 գրությունների ՝ կապված Աշտարակ համայնքի Արուճ և Մուղնի վարչական տարածքներում իրականացվելիք ՕԿՋ-ների շինարարության ընթացքում առաջացած գրունտի և շին աղբի տեղադրման, ինչպես նաև փափուկ գրունտի ձեռքբերման տարածքների հետ, հայտնում ենք, որ շին աղբը և հանված գրունտը կարող եք տեղափոխել Արուճ գյուղից մոտավորապես 30 կմ, իսկ Մուղնիից՝ 7կմ հեռավորության վրա գտնվող Աշտարակ Էջմիածին մայրուղու աջ հատվածում գտնվող նախկին աղբավայրի տարածք, իսկ փափուկ գրունտը կարող եք տեղափոխել Կոշ գյուղի վարչական տարածքում կուտակված Արուճից 7կմ, իսկ Մուղնիից 3կմ հեռավորությունից:

Թ. Շ ԱՀՎԵՐԴՅԱՆ

*Կատարող՝*
*Նվեր Մուրադյան*
*աշխ.հեռ. 0232-3-10-26*

Առդիր 3 – Հատակագծեր

Ջրաշեն




Խնկոյան



Դովեղ


ЛР
Doveg's beer
Դովեղի ՕԿՋ
Պ/կ
Surb Sargis monastery

**Կոթի**


Surb Bartsryal
Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի
Барекамаван Բարեկամավան
Կոթիի ՕԿՋ
Флаг Армении
Коти Կոթի

**Այգեհատ**




**Սպիտակ**



**Արուճ**



Մուղնի




Ներքին Բազմաբերդ

